Աշտարակի հուշարձանների տարածքի դիզայներական կազմակերպման սկզբունքները

Ոսկանյան Ռ. Գ.
Հայաստանի Գեղարվեստի Պետական Ակադեմիա, ասպիրանտ *(Երևան, Հայաստան)*
rubenvoskanyan.e34@gmail.com

Վճռորոշ բառեր՝ Աշտարակ, պատմամշակութային հուշարձան, լանդշաֆտ, թանգարան, դիզայն, առաջարկ, պատմական, մշակութային ժառանգություն, արգելոց, պահպանություն

Принципы проектирования территории памятников г. Аштарак

Восканян Р. Г.
Государственная академия художеств Армении, аспирант (Ереван, Армения)
rubenvoskanyan.e34@gmail.com

Аннотация. Принимая во внимание опыт сохранения уникальность творческих образов во время инновационного и функционального дизайна современных городов, были представлены необходимые научные подходы и основные цели города Аштарак, чтобы сохранить индивидуальные характеристики города, которые объединяют материальные и духовные ценности различных периодов строительства, и является целью представленной статьи.
Необходимо создать принципы оформления памятников, г. Аштарк так как они, к сожалению, отсутствуют при сохранении и музейном хранении памятников. А также отсутсвует согласованная последовательность действий и логическое направление. Координировать и организовать его исторический центр, имеющий большое значение для изучения и утверждения перспектив развития города, где централизовано его историческое и культурное наследие. Таким образом, для более правильной и системной организации восстановления и сохранения города необходимо установить принципы, направление и последовательность проектирования территории памятников.
Ключевые слова: Аштарак, историко-культурный памятник, ландшафт, музей, дизайн, предложение, историческое, культурное наследие, заповедник, консервация(защита)

Principles of designing the territory of the monuments of Ashtarak

Voskanyan R. G.
State Academy of Fine Arts of Armenia, Postgraduate student (Yerevan, Armenia)
rubenvoskanyan.e34@gmail.com

Abstract: Taking into account the attempts to preserve the unique and unprecedented creative character of modern cities during their innovational and functional construction, the necessary scientific approaches and objectives of reconstruction for the city of Ashtarak to preserve the individual characteristics of the city that combine the material and spiritual values of various periods of construction, are hereby presented and constitute the purpose of the articles.
It is necessary to create design organization principles for Ashtarak monuments, for they, within the scope of preservation and museum storage of monuments, are, unfortunately, missing. Also there is no agreed sequence of actions and logical direction. To coordinate and organize its historical center, where its historical and cultural heritage is centralized: this is of great importance for the study and approval of the development prospects of the city. Thus, for a more correct and systematic organization of the restoration and preservation of the city, it is necessary to establish the principles, direction and sequence of designing the territory of monuments.
Keywords: Ashtarak, historical and cultural monument, landscape, museum, design, offer, historical, cultural heritage, natural reserve, conservation

Ժամանակակից քաղաքների նորարարական և ֆունկցիոնալ նախագծման ընթացքում դրանց ինքնատիպ ու անկրկնելի ստեղծագործական կերպարները պահպանելը հանդիսանում է կարևոր սոցիալ և մշակութային խնդիր ամբողջ աշխարհի համար: Հայաստանում այդպիսի փորձ կա արդեն Երևանի, Գյումրիի, Գորիսի, Վանաձորի համար: Այնտեղ հատկապես սուր են դրված պատմամշակութային տարածքների պահպանման, վերականգնման և վերակառուցման խնդիրները, որոնք իրենց անմիջական տեղն են գրավում այդ քաղաքների ժամանակակից վերահատակագծման ընթացքում: Աշտարակ քաղաքի համար նույն-

պես անհրաժեշտ են գիտական մոտեցումներ և վերակառուցման հիմնական միջոցառումներ՝ պահպանելու համար այդ քաղաքի անհատական հատկանիշները, որոնք միավորում են տարբեր ժամանակաշրջանների կառուցապատման նյութական և հոգևոր արժեքները, որոնք և հանդիսանում են ներկայացվող հոդվածի նպատակը (նկ.1)։ Գիտական խնդիրներն են ներքոհիշյալ ստրատեգիաների իրականացումը, ինչպես նաև՝ միջավայրի վերակառուցման, դիզայներական նախագծման, միջավայրի տարածական կազմակերպման, գոտևորման, առաջարկությունների ամրագրման քննարկումն ու անդրադարձումը Աշտարակի կառուցապատման մեջ։

ա. Ստեղծել Աշտարակի հուշարձանների տարածքների դիզայներական կազմակերպման սկզբունքներ, քանի որ դրանք որպես այդպիսիք Աշտարակ քաղաքի հուշարձանների պահպանման ու թանգարանացման մեջ, ցավոք, բացակայում են։ Այդ սկզբունքների ստեղծումը թույլ կտա հուշարձանի վերականգնման կամ թանգարանացման ժամանակ ճշգրտորեն կատարել նաև դրանց տարածքների դիզայներական նախագծում։

բ. Պատմամշակութային տարածքների դիզայներական կազմակերպման սկզբունքներ ձևավորելու համար անհրաժեշտ է ստեղծել գործողությունների համակարգված հաջորդականություն ու տրամաբանական ուղղություն։ Դա հնարավորություն կտա կատարել տարածքի դիզայներական կարգավորման միջոցառումներ՝ չխախտելով հուշարձանապահպանության սկզբունքները, որը հակառակը, կխթանի վերջիններիս պահպանմանը, հեշտացնելով հուշարձանի նշանակության ու ժամանակաշրջանին համապատասխան դիզայներական կարգավորումներ կազմակերպելը։

գ. Աշտարակ քաղաքի համար քաղաքաշինական զարգացման հեռանկարների ուսումնասիրման ու հաստատման համար խիստ կարևոր է դրա պատմականորեն ձևավորված կենտրոնը (նկ.2), որտեղ կենտրոնացված է դրա պատմամշակութային ժառանգությունը։ Հայտնի է, որ Աշտարակը հնում եղել է գյուղ, որը բաժանված է եղել հինգ թաղերի՝ Բերդաթաղ, Վերին թաղ (կամ ս. Մարիանէի թաղ), Ամենափրկչի թաղ, Կարմրավորի թաղ և Կավահանքի թաղ [**1**, էջ 165]։ Հենց այդ հնագույն «թաղ»-երն են ձևավորում Աշտարակյան պատմական կենտրոնը։ Քաղաքի հասարակական նշանակության տարածքների նախագծման համար նախկինում չեն դիտարկվել, ուսումնասիրվել ու առաջարկվել նրա կառույցների՝ որպես քաղաքի հիմնական ու ամբողջական միջուկի պահպանությունն ու վերաիմաստավորումը։ Կատավել է միայն պատմամշակութային հուշարձանների հաշվառում, ցուցակագրում, որի հիման վրա 2002թ. ՀՀ կառավարության թիվ 628 որոշման համաձայն հաստատվել է դրանց պահպանության պետական ցուցակը [**2**]։ Քաղաքի կենտրոնում պատմական շենքերի պահպանության կազմակերպումը անբաժանելի է ամբողջական քաղաքի զարգացման հետ կապված հարցերից։

դ. Աշտարակի համար հատկանշական է դրա միջնադարյան պաշտամունքային ճարտարապետությունը, որն իր յուրատիպ առանձնահատկություններով առանձնանում է հայկական քաղաքների մեջ։ Դրա պահպանությունն ու նոր քաղաքաշինական կառուցապատման սկզբունքներին հարմարեցումը հանդիսանում է քաղաքի տարածքային նախագծման և ժամանակակից օգտագործման հետ կապված կարևորագույն խնդիրը։

1. Քաղաքային վերակառուցման սկզբունքները

Հայաստանի պատմաճարտարապետական հուշարձաններով հարուստ քաղաքներում դրանց տարածքների նախագծային կազմակերպման փորձը ցույց է տվել, որ այնտեղ առաջին հերթին պահպանության տակ են վերցվել «Հուշարձանների պահպանության ցուցակում» գտնվող հուշարձանները։ Դրանց մասին կան համապատասխան վարչական օրենսդրություն և կանոնակարգ, որի շնորհիվ այդ կառույցները գտնվում են պետական պահպանության շրջանակներում։

Գյումրի քաղաքի պետական այդ ցուցակներում գրանցված են մոտ 500 բնակելի տուն, 8 եկեղեցի, 4 պատմական զերեզմանոց, 5 դամբարանադաշտ, մոտ 200 հասարակական շենք, այդ թվում՝ Կումայրի արգելոցի, Երկաթգծի, Զորակայանի համալիների, զբոսայիների, մշակութային պալատների, տուն-թանգարանների շինությունները, ինչպես նաև առանձին



Նկ.1 Աշտարակ քաղաքի գլխավոր հատակագիծ



Նկ. 2. Աշտարակ քաղաքի կենտրոնի և դրա հարակից հուշարձանները

Աղյուսակ 1.

Հ3-Բնակելի տուն, 1888թ	Հ15-Կարմրավոր եկեղեցի	Հ28-Ջրաղաց
Հ4-Բնակելի տուն, 19-րդ դ. վերջ	Հ16-Ծիրանավոր եկեղեցի	Հ31-Նահատակի գերեզման
Հ5-Բնակելի տուն, 1910թ	Հ17-Ս. Մարիանե եկեղեցի	
Հ6-Բնակելի տուն, 1904թ	Հ18-Ս. Սարգիս եկեղեցի	
Հ7-Բնակելի տուն, 19-րդ դ. վերջ	Հ19-Սպիտակավոր եկեղեցի	
Հ8-Բնակելի տուն, 19-րդ դ. վերջ	Հ20-Կամուրջի մնացորդներ 10-րդ դ.	
Հ9-Բնակելի տուն, 20-րդ դ. սկիզբ	Հ21-Կամուրջ 17-րդ դ.	
Հ10-Բնակելի տուն, 1837թ	Հ24-Հուշասյուն Ա. Այվազյանին	
Հ11-Բնակելի տուն, 1895թ	Հ25-Հուշաղբյուր	
Հ12- Բնակելի տուն, 1896թ	Հ26-Հուշարձան Ն. Սիսակյանին	

կանգնած 50-ից ավել հուշարձան և մեկ տասնյակ որմնանկար [**3**]:

Վանաձորի, Գորիսի, Դիլիջանի և ՀՀ մնացած բոլոր մեծ ու փոքր քաղաքի, ավանի ու այլ պատմական տարածքների համար կազմված պետական ցուցակներում հաշվառված են այդ տարածաշրջանների պատմական և ճարտարապետական արժեք ներկայացնող հնագիտական /դամբարանադաշտ, հնավայր, քաղաքատեղի, բերդ, ամրոց, քարայրներ/ և միջնադարյան ճարատարապետական հուշարձաններ /եկեղեցի, վանական համալիրներ, կամուրջ, բնակելի և հասարակական շինություններ, խաչքարեր և այլն/: Այդ պատմական հուշարձանների ցուցակները, սակայն, բավարար հիմք չեն հանդիսացել դրանց պահպանման և հետագա օգտագործման համար:

Չնայած, որ այդպիսի հուշարձանները հատկապես արժեքավոր են տարածքային նախագծման ընթացքում, սակայն երբեմն նկատելիորեն անտեսվում են

- հուշարձանների արժեքներն ու դրանց բազմակողմանի նշանակությունները ուժային տարբեր կառույցների, քաղաքային, վարչական և պոտենցյալ ներդրողների կողմից,
- թանգարանային համալիրների պահպանությունը, ձևավորումը և զարգացումը,
- ամբողջ վարչական կառույցների գործողությունների բաժանումն ու նախագծման հիմնական խնդիրներին դրանց համապատասխանեցումը:

Նման հակասություններից հեռու մնալու նպատակով անհրաժեշտ է լիարժեք ուսումնասիրել քաղաքի պատմամշակութային ժառանգությունն ու հետագա նպատակային օգտագործման համար կազմել դրանց դիզայներական կազմակերպման նախագիծ:

2. Քաղաքի դիզայներական նախագծում

Քաղաքի վերակառուցման խնդիրը քննարկելիս անհրաժեշտ է հնավորինս պահպանել պատմական արժեքավոր շենքերը և միևնույն ժամանակ նոր կյանք ու շահագործման նոր հնարավորություններ ներդնել դրանց մեջ:

Քաղաքային պլանավորման միջամտության տեսանկյունից հին քաղաքի պատմական միջավայրում հնարավոր է մշակել քաղաքային հողերի բաժանման և պատմա-ճարտարապետական ժառանգության պահպանման նորարարական գաղափարների պաշտպանված և կարգավորված արգելոցների մի քանի տարբերակներ: Դրանք միավորված են մեկ պահպանական հասկացությամբ, որտեղ քաղաքային լանդշաֆտին միջամտելու համար կիրառվում են տարբեր աստիճանի խստության որոշ սահմանափակումներ [**4**]:

Սովորաբար, նախագծման ուղին սկսվում է դրա ֆունկցիոնալ և տեխնիկական հիմքի վերաբերյալ իրազեկումից, որը որոշում է դրա օբյեկտիվ հատկությունները: Ավելին, նախագծման ընթացում անպայման անհրաժեշտ է ընտրել կիրառվելիք ջանքերի նպատակահարմար կողմերից մեկը՝ կենտրոնանալ կա՛մ լայնորեն հասկացվող կյանքի գործընթացների (առարկայական բարդույթների, շրջակա մի-

ջավայրի իրավիճակների, տեղեկատվական համակարգերի) օպտիմալ կազմակերպման, կա՛մ նեղ ֆունկցիոնալ (կառուցողական, տեխնոլոգիական) առաջադրանքների առավել ճշգրիտ լուծման վրա, կամ պարզել վերջնական արդյունքի տեղեկատվական և հուզական բաղադրիչը [**5,** էջ 30-31]:

3. Արգելավայրերը՝ կազմակերպված բավական խիստ սահմանափակումներով ստեղծումը ամենատարածված տեսակն է ճարտարապետական անսամբլի շրջանակներում:

Սրանք ոչ միայն վանքեր, մատուռներ, այգիներ, հրապարակներ և փողոցներ են, որոնք ունեն բնական սահմաններ՝ ամրոցների պատերի, ցանկապատերի և բնական արգելքների տեսքով: Այս տեսակը ներառում է նաև յուրահատուկ և ինտեգրված քաղաքային պլանավորման համալիրները, ինչպիսիք են հնագույն քաղաքների կենտրոնները, եթե նույնիսկ դրանք մասնակիորեն կորցրել են իրենց տարրերը:

4. Պահպանության գոտիների ստեղծումը, որոնք առավել բազմազան են և ունեն երեք կատեգորիաների տարածքներ:

- Առաջիններն այն տարածքներն են, որոնք հարակից են օտար միջավայրում առանձին կանգնած պատմական կամ ճարտարապետական հուշարձաններին: Այդ տարածքների սահմանները որոշվում են՝ հաշվի առնելով հիմնական ու կարևոր հուշարձանի տեսանելիությունն ապահովող ու պահպանող պայմանների ստեղծումը: Հին և նոր շենքերի մասշտաբները և ճարտարապետությունը համակարգված են շրջակա միջավայրի հետ, իսկ բարձրությունները սահմանափակում են դիտողների տեսողական ընկալման ունակությունն առավել գերակշռող կողմից պահպանելու սկզբունքներով (նկ.1):

-Քաղաքային պլանավորման մեջ տարածքի երկրորդ կարգավորումը կառույց է, որտեղ ամբողջ քաղաքային լանդշաֆտը պատմական հուշարձան է: Դրա հիմնական մասը հենց այս քաղաքի համար հատուկ կառուցապատումն է: Այն բնութագրվում է այն փաստով, որ ճարտարապետական արժեքավոր կառույցների հետ միասին այստեղ գերիշխող են նաև քաղաքի պատմական միջավայրի տարրերով հագեցած այլ շինությունները:

- Երրորդ կարգի տարածքները հուշարձանների արգելոցային շրջաններ են, որոնց զարգացումը կարող է ազդել դրանց ընկալման վրա: Այստեղ հեռավոր կետերից դիտման հեռանկարների բացահայտումը պետք է որոշվի պլանավորման մեթոդներով:

Կանոնակարգող տարածքները շրջակա տարածքների արտաքին սահմաններին հարակից տարածքներ են: Այդ տարածքների սահմանափակումները այնքան էլ խիստ չեն, և թույլատրվում են ավելի ազատ արմատական վերափոխումներ: Նոր կառուցապատումը թույլատրվում է, սակայն սահմանափակելով հարկի բարձրությունը և ապահովելով պատմական և ճարտարապետական անսամբլի ընկալումը գերիշխող հիմնական առանցքի ուղղությամբ: Բացառություն չեն կազմում նաև այնպիսի վերադասավորության հնարավորությունները, երբ հաշվի է առնվում եղած կառուցապատման շարունակական պահպանումը [**6**]:

5. Աշտարակ քաղաքի դիզայներական առաջարկների ներկայացումը

Հաշվի առնելով վերը նշված պատմամշակութային տարածքների պահպանության և դրանց դիզայներական կազմակերպման նախագծային սկզբունքները, կարելի է ընտրել Աշտարակ քաղաքի համար ամենահարմար և ընդունելի տարբերակները: Դրա հիմքում պետք է դրվեն քաղաքի կարևոր և նշանավոր շինությունների հասանելիության, տարածքների պահպանության և նպատակային շահագործման խնդիրների կատարումը:

Ուսումնասիրությունների արդյունքում առանձնացրել ենք հուշարձանների մի քանի խմբեր, որոնք միավորվել են իրենց պատմական և ճարտարապետական հատկանիշներով: Աշտարակ քաղաքի համար դրանք են՝

- միջնադարյան պաշտամունքային կառույցները՝ եկեղեցիներ կից կամ առանձին պատմական ու խաչքարային գերեզմանոցներով,
- կամուրջները,
- կենցաղային՝ կոմունալ կառույցները (19-20-րդ դդ. բաղնիքը),
- հուշարձան-կոթողները,

- Բնակելի պատմական տներ /ներառյալ Պ.Պոռշյանի տուն-թանգարանը/:

Քանի որ քաղաքի պատմաճարտարապետական հիմք կազմող միջնադարյան հուշարձանները /Ծիրանավոր, Սպիտակավոր, Կարմրավոր, ս.Մարինէ եկեղեցիները, 10-րդ և 17-րդ դարերի կամուրջները և 1900 թ, բաղնիքը/ հիմնականում կենտրոնացված են և գտնվում են նույն տարածքում, ապա դրանց հետագա պահպանության և հասանելության համար նպատակահարմար կլիներ ընտրել արդեն վերևում առաջարկված սկզբունքներից երկրորդ տարբերակը: Այս դեպքում նախագծման կազմակերպման ընթացքում դիզայներական մոտեցումները ոչ միայն կպահպանեն հուշարձաններին կից լանդշաֆտն ու շրջակա միջավայրերն, այլև կօգտագործեն դրանք միջնադարյան կառույցների ավելի շահավետ ներկայացման համար: Միջավայրի կազմակերպման ժամանակ հուշարձանները կարող են պահպանել իրենց պատմական միջավայրերը, իսկ շրջակա տարածքներում իրականացվող քաղաքաշինական կառուցապատումն ապագայում հաշվի կառնվի դրանց շահագործման և հասանլիության խնդիրները:

Աշտարակ քաղաքում առկա են նաև մի քանի այլ տիպի պատմական հուշարձաններ, որոնց տարածքների պահպանության համար հարկավոր են նախագծման այլ սկզբունքներ: Դրանք քաղաքամերձ շրջաններում պահպանված միջնադարյան ճարտարապետության, այսպես կոչված, «փոքր ծավալներն են», որոնք ներկայացվում են խաչքարային արվեստի անկրկնելի նմուշներով: Դրանք հիմնականում տեղակայված են արդեն պահպանական միջավայր ստեղծած տարածքներում՝ պատմական գերեզմանոցներում:

Քաղաքի հյուսիս-արևելյան մասում, Ապարան տանող ճանապարհի աջ կողմում տարածվում է միջնադարյան գերեզմանոց՝ 13-20-րդ դարերի խաչքարերով ու տապանաքարերով: Դրանցից առավել արժեքավոր են 13-րդ դարի խաչքարերն իրենց պատկերազարդ ինքնատիպ հորինվածքներով, որոնցով արժևորվել է հայկական դեկորատիվ արվեստի կազմավորման ամենակարևոր ժամանակահատվածը:

Խաչքարերով գերեզմանոցներ տարածվում են նաև Կարմրավոր, Ծիրանավոր և ս.Մարինէ եկեղեցիների շուրջ, որոնցով էլ պայմանավորվել է դրանց ցուցադրման հասանելությունն ու լուծվել են պահպանության խնդիրները: Հիմնականում 7-13-րդ դարերի այդ խաչքարերը ամբողջացրել են ճարտարապետական հուշարձանների շրջակա տարածքները, առանց որոնց դրանք կկորցնեին իրենց պատմական միջավայրերը:

Քանդակային արվեստի հետագա զարգացման արդյունք են ներկայիս հուշարձան-աղբյուրներն ու հուշարձան-կոթողները՝ նվիրված պատմական այս կամ այն իրադարձությանը կամ պատմական նշանավոր դեմքին: Սրանցից կարելի է առանձնացնել 1974 թ. Երկրորդ աշխարհամարտի զոհերին նվիրված /ճարտ. Վ. Թասլակյան/, 1980 թ. քաղաքի արևմտյան եզրին՝ Թալին տանող ճանապարհին կանգնեցված Վանի 1915 թ. հերոսամարտին նվիրված /ճարտ. Ջ. Թորոսյան/, ինչպես նաև Արտեմի Այվազյանի և Նորայր Սիսակյանի հուշարձանները: Սրանք բոլորը միասին կազմում են Աշտարակ քաղաքի մշակութային ամբողջականության կազմավորման բաղկացուցիչ մասերը:

Քաղաքի մշակութային միջավայրի հիմնական և արժեքավոր մյուս հատվածը դրա բնակելի պատմական շինություններն են: Դրանք հիմնականում պահպանվել են Ղափանցյան, Սաժումյան, Աբովյան, Այվազյան, Է. Հակոբյան փողոցներում, Ն. Աշտարակեցու հրապարակի վրա: Դիզայներական նախագծերի հիմքում դրանցով է պետք կողմնորոշվել և գտնել զարգացման ուղղություններ, քանի որ այդ շինությունների ճարտարապետական կերպարների շնորհիվ է քաղաքը առավել յուրատիպ արժևորվում:

Բնակելի տների մեջ անհրաժեշտ է առանձնացնել Պ. Պոռշյանի տուն թանգարանն՝ իրեն հարող տարածքով և պահպանական գոտիներով: Այն արդեն գտնվում է պահպանվող հուշարձանների ցուցակում և հանդիսանում է քաղաքի պատմաճարտարապետական ժառանգության անբաժանելի մասը:

Բնակելի տների տարածքների դիզայներական կազմակերպումը պահանջում է ամենաբազմակողմ և մանրակրկիտ ուսումնասիրություն, քանի որ տեղադրությունն ինքնին առաջադրում է որոշակի դժվարություն-

ներ: Դրա համար կառանձնացնենք մի քանի ուղղություններ, որոնք կօգնեն դրանց տարածքների հետագա պահպանության և քաղաքային նախագծման պայմաններում:

Հաշվի առնելով Աշտարակ քաղաքի վերը նշված պատմաճարտարապետական մի քանի տիպի հուշարձանների առկայությունը, առաջարկում ենք դրանց տարածքների դիզայներական կազմակերպման համար ընտրել հետևյալ մի քանի սկզբունքները.

- միավորել հուշարձաններն ըստ դրանց պատմական արժեքների,
- միավորել հուշարձաններն ըստ դրանց տեղադրության,
- քաղաքային հատակագծում նշել դրանց մոտեցման ուղիներն ու առանձնահատկությունները,
- քաղաքային միջավայրում առանձնացնել դրանց միավորող հնարավորությունները,
- ներկայացնել հուշարձանները միասնական արգելոց-թանգարանի սկզբունքներով,
- դիտարկել դրա մեջ յուրաքանչյուր հուշարձանի հասանելիությունը, տարբեր հնարավոր կետերից դիտարկելության հնարավորությունները,
- բնակելի տների պարագայում վերականգնել դրանց պատմական տեսքը, վերականգնել դրանց նախնական նշանակությունը կամ առաջարկել նոր օգտագործման հնարավորություններ,
- վերականգնման ժամանակ ապահովել դրանց միջավայրի կազմակերպումը քաղաքաշինական ժամանակակից չափորոշիչներով,
- նոր շինությունների նախագծում կամ հին կառույցների ձևափոխություն՝ համաձայն հաստատված նախագծի պահանջների,
- արգելոցի սահմաններում կատարել մասնակի շինարարություն՝ տարածքի բարելավման, բարեկարգման և զարգացման նպատակներով
- ապահովել մարդատար տարբեր տրանսպորտային միջոցների մոտեցումն ու կայանման պայմանները.

Կարգավորված պահպանության բնագավառում հատուկ պայմանավորվածությամբ կարելի է առանձնացնել հնագիտական արժեքավոր մշակութային շերտ ունեցող տարածքները, որտեղ մինչև հետազոտական աշխատանքների ավարտը չպետք է իրականացվեն այդ տարածքների պահպանության խախտման հետ կապված որևէ շինարարություն կամ կանաչապատում:

Ժամանակակից Աշտարակ քաղաքն աճում է և պահանջում ոչ միայն պատմական միջավայրի վերականգնում, այլև բնակարանային ֆոնդերի մեծացում: Հետևաբար, հնացած շինությունների փոխարինման և պատմական հյուսվածքների մեջ նոր բնակելի կառույցների ներդրման հարցը միշտ եղել է վերակառուցման բարդ գիտատեխնիկական և գործնական խնդիրը: Պատմական քաղաքները կարիք ունեն այնպիսի բնակավայրերի զարգացման հեռանկարներ, որտեղ դրանք կպահպանեն իրենց անհատականությունը և միաժամանակ կհամապատասխանեն կենդանի միջավայրի և ընթացիկ շինարարական մեթոդների մասին եղած ժամանակակից գաղափարները:

Դիզայներների համար հատուկ դժվարություններ են առաջանում այն դեպքերում, երբ պատմական կենտրոնի տարածքում պետք է կառուցել նոր մեծ հասարակական շինություններ: Այստեղ կարևոր է, որ նոր շենքերը պատմական միջավայրում ներկայացնելիս ժամանակակից ճարտարապետական ձևը դառնա գոյություն ունեցող կառուցվածքի մի մասը՝ անկախ նրանից, թե արդյոք դա նոր ճարտարապետական ձև է կամ հաջող ռճաբանություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Երվանդ Շահազիզ**, Աշտարակի պատմությունը: - Երևան, «Հայաստան» հրատարակչություն: 1987:
2. **ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ**, Արագածոտնի մարզ: 2002:
3. **ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ**, 2002:
4. **Никифоров А. А.**,Зоны охраны объектов культурного наследия - правовой инструмент сохранения исторической среды памятника истории и культуры. 2015.
5. **Шимко В. Т.**, Основы дизайна и средовое проектирование, Учебное пособие. – Москва, 2005.
6. **Долгов А. В., Бердюгина Ю. М.**, Теоретический анализ понятия «территория памятника». // Академический вестник. УРАЛНИИПРОЕКТ, РААСН, 3/2014.

Сдана/Հանձնվել է՝ 24.05.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 26.05.2020
Принята/Ընդունվել է՝ 29.05.2020